ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«05» սեպտեմբերի 2024թ. **ՀՀ, ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ. 2-րդ շենք**
Հեռ. (+37412) 27-27-27

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/15-2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«ՁԼԵՅԿՍ ՌԵԶՈՐՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «ՁԼԵՅԿՍ ՌԵԶՈՐՏ» ՍՊԸ-ի միջև 2024թ. հուլիսի 12-ին կնքված «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/15-2» ծածկագրով պայմանագրի շրջանակներում 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ՁԼԵՅԿՍ ՌԵԶՈՐՏ» ՍՊԸ-ն: Ըստ կնքված «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/15-2» ծածկագրով պայմանագրի առաջին մատակարարումը պետք է իրականացվեր մինչև 2024թ. օգոստոսի 12-ը ներառյալ: Սակայն, սույն թվականի հուլիսի 24-ին ստանալով պատվերի հայտ 2-րդ չափաբաժնի մասով ամբողջ քանակի համար, մինչ 2024թ. սեպտեմբերի 2-ը ներառյալ մատակարարում չի իրականացվել՝ խախտելով կնքված պայմանագրի 2.1.1 և 2.1.7 կետի (բ) ենթակետը՝ համաձայն որի կնքված պայմանագիրը համարվում է միակողմանի լրիվ լուծված, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը՝ ապրանքի մատակարարման ժամկետը խախտելով 2 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով

սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք 10 բանկային օրվա ընթացքում «Այ Դի բանկ» ՓԲԸ-ի **11813017106900-ի** վրա փոխանցել որակավորման ապահովման՝ **450000 ՀՀ դրամը** և պայմանագրի ապահովման **300000 ՀՀ դրամ գումարները**, ընդամենը՝ **750000 ՀՀ դրամ** և վճարման կտրոնները ներկայացնել ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգողին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ Digitally signed by NAZINYAN SUREN 3103820607
Дата: 2024.09.06 13:27:47 AMT

Ս. ՆԱԶԻՆՅԱՆ